*ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

*ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-842[1]-08.05.2024-ԱոՀ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7.6-րդ եւ 7.7-րդ մասերով.

«7.6. ~~Սեռաբջիջների~~ <u>Սերմնաբջիջների դոնորությանն</u> առնչվող ցանկացած գովազդն արգելվում է, եթե այն չի իրականացնում գինեկոլոգիական կամ վերարտադրողաբանական բժշկական օգնության եւ սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունը:

7.7 Ձվաբջիջների դոնորությանը, փոխնակ մոր միջոցով տրամադրվող ծառայություններին առնչվող ցանկացած գովազդը արգելվում է, եթե այն չի իրականացվում վերարտադրողաբանական բժշկական օգնության եւ սպասարկման տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության կողմից:»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: